

ՄՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ ԿԸ ՊԱՏԱՐԱԳԷ
ԵՒ ՍԱՐԿԱԽԱԳԱԿԱՆ ԶԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԿԸ ԿԱՏԱՐԷ
ՖԱՌԻԼԸՐԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻԶ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Առաջնորդ Սրբազան Հայրը Կիրակի, Նոյեմբեր 8ին, Առաջնորդարանի Երիտասարդաց Վարիչ՝ Արժ. Տ. Ալեքիս Քհնյ. Արվեստի եւ Քահանայութեան Թեկնածու՝ Բրշ. Վարդան Սրկ. Զարգարեանի ընկերակցութեամբ, մեկնեցաւ Ֆաուլըր եւ Սուրբ Պատարագ մատուց Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցւոյ մէջ:

Սուրբ Պատարագի ընթացքին Սրբազան Հայրը Հոգեւոր Հայրերու, Սարկաւագաց եւ Դպրաց Դասի մասնակցութեամբ, Սարկաւագ ձեռնադրեց Պրայըն Առաքելեանը եւ Դանիէլ Հայրապետեանը եւ իր քարոզին մէջ յորդորեց, որ նոր ձեռնադրեալ Սարկաւագները Տէր Եղիայի ցուցմունքներով հաւատարմութեամբ եւ նուիրումով շարունակէին իրենց հոգեւոր ծառայութիւնը:

Սուրբ Պատարագի աւարտին եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ «Հունձքի Ճաշկերոյթ»ը (Harvest Banquet), որու ընթացքին գործադրուեցաւ պատշաճ յայտագիր մը: Արժ. Տէր Եղիա Աւագ Քհնյ. Հայրապետեան կատարեց սեղաններուն օրհնութիւնը: Բացման խօսքը կատարեց Ծխական Խորհուրդի Փոխ Արեւնապետ եւ օրուան հանդիսավար՝ Էլլին Գրաուլի եւ իր ուրախութիւնը յայտնեց, որ Առաջնորդ Սրբազան Հայրը եւ Արժ. Տ. Ալեքիս Քհնյ. Արվեստի ներկայ էին տարեկան այս ձեռնարկին:

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցւոյ տարեկան «Հունձքի Ճաշկերոյթ»ի առթիւ աւանդութիւն դարձած է յատուկ պատուի արժանացնել Ծուխէն ներս երկարամեայ եւ նուիրեալ ծառայութիւն մատուցող երկու հաւատացեալներ՝ Heritage Spotlight խորագրով: Այս տարի այդ պատուին արժանացած Տէր եւ Տիկին Տանըլըր եւ Արեւիկն Առաքելեան: Այս առթիւ մասնաւոր գնահատութեան արժանացան նաեւ նոր ձեռնադրուած Բրշ. Սարկաւագներ՝ Պրայըն Առաքելեան եւ Դանիէլ Հայրապետեան:

Արժ. Տ. Եղիա Աւագ Քհնյ. Հայրապետեան իր խօսքին մէջ ի սրտէ բարի գալուստ մաղթեց Առաջնորդ Սրբազան Հօր եւ երախտագիտութիւնը յայտնեց Սուրբ Պատարագի մատուցման, հոգեւոր պարգամին եւ Սարկաւագաց ձեռնադրութեան համար եւ յայտարարեց, թէ յառաջիկայ տարուան Ապրիլ 11ին պաշտօնապէս պիտի տօնախմբուէր Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Եկեղեցւոյ 100ամեակը: Սրբազան Հայրը տուաւ իր քաջալերական եւ ոգեւորիչ պարգամը եւ իր ուրախութիւնը յայտնեց անգամ մը եւս հովուական այցելութիւն շնորհելու այս Ծուխին եւ հանդիպելու հաւատացեալներուն եւ զրոյց ունենալու անոնց հետ: Իր գնահատութիւնը յայտնեց, որ Տէր Եղիա Աւագ Քահանայի գլխաւորութեամբ Ծուխը կը պատրաստուէր հարիւրամեակի տօնախմբութեան: Յաջողութիւն մաղթեց եւ իր օրհնութիւնները բաշխեց բոլորին: Արդարեւ, Սրբազան Հօր հովուական այս այցելութիւնը եւ կատարած ձեռնադրութիւնը յիշատակելի եւ հոգեւոր ցնծութիւն պատճառող գեղեցիկ օր մը եղաւ Ծուխի հաւատացեալներուն համար:

Սուրբ Պատարագի եւ ճաշկերոյթի հանդիսութեան ներկայ էր նաեւ Ծուխին վաստակաշատ նախկին Հոգեւոր Հովիւը՝ Արժ. Տ. Գէորգ Աւագ Քհնյ. Առաքելեան: